«ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈԱՉ-00/08

Հաստատվել է

ՄԳՀ գիտական խորհրդի «22» 08 2022թ. նիստում

Ռեկտորի ժ/պ ____________ Պապել Ա.Ն.

«ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

ք. Երևան – ք. Վանաձոր

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի(այսուհետ՝ ՄԳՀ) որակի ապահովման (այսուհետ՝ ՈԱ) քաղաքականությունը նրա առաքելության, ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված գործողությունների և գործընթացների ընդհանուր ռազմավարություն ու ընթացակարգ է, որը համապատասխանեցված է Բարձրագույն կրթության զարգացման ՀՀ քաղաքականության նպատակներին ու սկզբունքներին, եվրոպական չափորոշիչներին ու ուղենիշներին, ինչպես նաև աշխատաշուկայի հարափոփոխ կարիքներին:

1.2. ՈԱ քաղաքականության կենսագործման համար նախադրյալ են հանդիսանում ՄԳՀ իրական կարողությունները և դրանց հաշվառմամբ ընտրված կոնկրետ գործողությունների իրականացման գործիքակազմը:

II. ՈԱ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Ապահովել համալսարանում բարձրագույն մասնագիտական կրթության որակի բարելավումն՝ ըստ աշխատաշուկայի կարիքների,

2.2. Ներդնել համակարգված, թափանցիկ և իրատեսական ընթացակարգեր՝ համալսարանում ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման, գիտական հետազոտությունների բարձր մակարդակի ապահովման համար:

ՈԱ քաղաքականության խնդիրներն են.

1. Բարելավել համալսարանի կառավարման համակարգը և կատարելագործել նրա կառույցները,

2. Համապատասխանեցնել գործող մասնագիտությունների կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակի բնութագրիչներին, նմանատիպ առաջավոր բուհերի կրթական ծրագրերին, աշխատաշուկայի պահանջներին,
3. Ապահովել ՄԳՀ բոլոր շահակիցների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում,
4. Նպաստել համալսարանում գիտահետազոտական գործունեության զարգացմանը և ուսումնական գործընթացի հետ դրա փոխկապակցվածությանը,
5. Նպաստել համալսարանի մարդկային, ֆինանսական, կրթական և այլ ռեսուրսների առավել արդյունավետ և նպատակային զարգացմանը, պլանավորմանը և բաշխմանը,
6. Նպաստել համալսարանի միջազգայնացմանը, ՀՀ և արտերկրի համալսարանների հետ փոխադարձ կապերի հաստատմանն ու զարգացմանը, ակադեմիական փոխանակումների ու շարժունության ընդլայնմանը և բարձրագույն կրթության եվրոպական միասնական տարածքին ինտեգրմանը,
7. Ամրապնդել և ներդաշնակեցնել ՈԱ համալսարանական և ֆակուլտետային կառույցների գործունեությունը որակի կառավարման հարցերում,
8. Որակի կառավարման շրջափուլային մոդելի ներդրմամբ անընդհատ բարելավել ՈԱ համակարգը, կատարելագործել և արդիականացնել ռա գործառույթները, ընթացակարգերը, չափանիշները և դրանց հետ առնչվող պաշտոնական փաստաթղթերը,
9. Ապահովել որակի ներքին և արտաքին.գնահատման գործընթացների փոխհամաձայնեցումը՝ նպաստելով համալսարանի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրմանը,
10. Նպաստել բուհում որակի մշակույթի ձևավորմանը և հետագա զարգացմանը,

11. Նպաստել բուհի հասարակական պատասխանատվության բարձրացմանը՝ ապահովելով հաշվետվությունների թափանցիկություն և հասանելիություն:

III. ՈԱ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

ՈԱ քաղաքականության նպատակների իրականացումն ու խնդիրների արդյունավետ լուծումը ենթադրում են ՈԱ հետևյալ հիմնական ընթացակարգերը.

3.1. *Կառավարման և վարչարարության ՈԱ.*

3.1.1. Համալսարանի կառավարման համակարգի կատարելագործում՝ հետևողականորեն կիրառելով հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմները,

3.1.2. Կառավարման մարմինների գործառույթների հստակեցում, պաշտոնների, անձնագրերի վերամշակում՝ ի նպաստ արդյունավետ կառավարման և որակի շարունակական բարելավման,

3.1.3. Կառավարման մարմինների գործունեությանը շահակիցների մասնակցության ապահովում:

3.2. *Կրթական ծրագրերի ՈԱ.*

3.2.1. Կրթական ծրագրերի համապատասխանեցում որակավորումների ազգային և եվրոպական շրջանակներին,

3.2.2. Կրթական ծրագրերի պլանավորման, փորձաքննության, պաշտոնական հաստատման, պարբերական մշտադիտարկման, գնահատման և վերանայման գործընթացներում բոլոր շահակիցների ներգրավվածության ապահովում,

3.2.3. Կրթական ծրագրերի սահմանված առաքելությունների, նպատակների և դասավանդման, ուսումնառության ու գնահատման ընտրված մեթոդների համապատասխանեցում ակնկալվող կրթական վերջնարդյունքներին,

3.2.4. Կրթական ծրագրերի համեմատական վերլուծության՝ բենչմարքինգի իրականացում՝ առաջավոր փորձը ներդնելու հեռանկարով,

3.2.5. Ծրագրերի և դասընթացների բովանդակությունը, ուսուցման մեթոդաբանությունը և դրանց իրականացման արդյունավետությունն ու որակը գնահատելու նպատակով ուսանողների, շրջանավարտների և գործատուների բավարարվածության վերաբերյալ պարբերական հարցումների անցկացում:

3.3. *Պրոֆեսորադասախոսական (այսուհետ՝ ՊԴ) կազմի ՈԱ.*

3.3.1. ՊԴ կազմի գործունեության արդյունավետության պարբերական գնահատում բազմաչափ մոտեցմամբ՝ ներառելով ուսանողների, ամբիոնների և գործընկեր դասախոսների կողմից դասախոսի գնահատումը, դասախոսի ինքնագնահատումը,

3.3.2. ՊԴ կազմի որակավորման աստիճանական բարձրացման և մասնագիտական վերապատրաստման գործուն համակարգի մշակում և իրականացում,

3.3.3. ՊԴ կազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման, տարակարգային առաջքաշման և խրախուսման համակարգերի կիրարկում:

3.4. Դասավանդման և ուսումնառության ՈԱ.

3.4.1. Դասավանդման և ուսումնառության նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրում, առաջավոր փորձի փոխանակում,

3.4.2. Դասընթացի և առանձին ուսումնական մոդուլի յուրացման արդյունքների օբյեկտիվ և թափանցիկ գնահատում (ընթացիկ և ամփոփիչ քննություններ),

3.4.3. Ծրագրի կրթական վերջնարդյունքների օբյեկտիվ և թափանցիկ գնահատում (ավարտական ամփոփիչ ատեստավորում),

3.4.4. Գնահատման ձևերի ու մեթոդների արդյունավետության վերաբերյալ ուսանողական պարբերաբար հարցումների կազմակերպում,

3.4.5. Ուսանողների գնահատման գործընթացի վերաբերյալ դասախոսների շրջանում պարբերական հարցումների անցկացում՝ կիրառվող չափանիշների, ձևերի ու մեթոդների արդյունավետության գնահատման նպատակով:

3.5. *Ուսումնական ռեսուրսների և ուսումնաօժանդակ ծառայությունների ՈԱ.*

3.5.1. Ուսումնական ռեսուրսների և ուսումնաօժանդակ ծառայությունների որակի գնահատում ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցախույզերի միջոցով, որոնք գնահատում են համալսարանի շենքային պայմանները, գրադարանի և համակարգչային սրահների աշխատանքը, համացանցի մատչելիությունը, լսարանների և ուսումնական լաբորատորիաների կահավորանքը, տեխնիկական հագեցվածությունը, կարիերայի կենտրոնի աշխատանքը և խորհրդատվական այլ ծառայությունների արդյունավետությունը, ուսումնաօժանդակ անձնակազմի գործունեության որակը:

3.5.2. Ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների որակի գնահատում դասախոսների բավարարվածության վերաբերյալ հարցախույզերի միջոցով, որոնք գնահատում են համալսարանի ենթակառուցվածքներն ու դրանց կառավարումը, գրադարանի և համակարգչային սրահների աշխատանքը, համակարգիչների ու համացանցի մատչելիությունը, լսարանների և ուսումնական լաբորատորիաների կահավորանքը և այլն:

3.6. *Գիտահետազոտական գործունեության ՈԱ.*

3.6.1. Գիտահետազոտական աշխատանքներում ՊԴ կազմի լայն ներգրավում,

3.6.2. Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության խրախուսում, ՈԻԳԸ գործունեության ակտիվացում,

3.6.3. Դասախոսական կազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման, տարակարգային առաջքաշման, նյութական ու բարոյական խրախուսման գործում գիտական հրատարակությունների թվի և վարկանիշների հաշվառում:

3.7. *Միջազգայնացման ՈԱ.*

3.7.1. Համալսարանի միջազգային կապերի բաժնի գործունեության արդյունավետության և որակի բարելավում, բուհի միջազգայնացման ռազմավարության մշակում և իրագործում,

3.7.2. Առկա գործընկերային կապերի ամրապնդում և խորացում, նոր կապերի և համագործակցության հաստատում,

3.7.3. ՊԴ կազմի, սովորողների մասնակցություն դրամաշնորհային և փոխանակման ծրագրերին:

3.8. *Հասարակական պատասխանատվության և հանրային կապերի ՈԱ.*

3.8.1. Հասարակությանը մատուցվող ծառայությունների ընդլայնում, դրանց արդյունավետության և որակի բարելավում,

3.8.2. ՄԳՀ կայքի գործունեության մշտադիտարկում,

3.8.3. Համալսարանի վերաբերյալ հրատարակվող նյութերի քանակի, ծավալի և բովանդակության մշտադիտարկում,

3.8.4. Համալսարանի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունների պարբերաբար անցկացում,

3.8.5. Շարունակական կրթության և վերապատրաստման դասընթացներում բուհի ընդգրկվածության ընդլայնում, կատարվող աշխատանքի մշտադիտարկում:

3.9. *Որակի կառավարման համակարգի գործունեության ՈԱ*

3.9.1. Ձևավորել որակի կառավարման ներքին համակարգ, ՈԱ համալսարանական և ֆակուլտետային կառույցներ, կազմակերպել ՈԱ պատասխանատուների վերապատրաստումներ,

3.9.2. Ներդնել որակի կառավարման շրջափուլային մոդելը, բարելավել ՈԱ համակարգը, կատարելագործել և արդիականացնել ՈԱ գործառույթները, ընթացակարգերը, չափանիշները և դրանց հետ առնչվող պաշտոնական փաստաթղթերը,

3.9.3. Իրականացնել Համալսարանի շահակիցների կարիքների ուսումնասիրություն և ապահովել հետադարձ կապը:

3.9.4. Համալսարանում ձևավորել որակի մշակույթ և աջակցել դրա անընդհատ զարգացմանը և ամրապնդմանը:

3.9.5. Նախադրյալներ ստեղծել որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների իրականացման համար՝ նախապատրաստվել համալսարանի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրմանը:

Համաձայնեցված է.

1. Իրավախորհրդատու՝
   ի.գ.թ., դոցենտ, Գ.Գրիգորյան _____
   ստորագրություն

2. Կրթության որակի ապահովման
   կենտրոնի ղեկավար՝
   փ.գ.թ., դոցենտ Գ. Ավագյան _____
   ստորագրություն